ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» մայիսի 2024 թվականի N 5-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2019 թվականի նոյեմբերի 28-ի N 18-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի կառավարման խորհրդի աշխատակարգի 12-րդ կետի 1-ին ենթակետը՝ կրթության տեսչական մարմնի կառավարման խորհուրդը **որոշում է**.

Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի 2024 թվականի ստուգումների տարեկան ծրագրում (այսուհետ՝ Ծրագիր) ներկայացված փոփոխությունները.

1) Ծրագրով նախատեսված և 1-ին եռամսյակում չստուգված 23 հանրակրթական ուսումնական հաստատություններից 10-ը ներառել ստուգումների 2024 տարեկան ծրագրի 2-րդ, իսկ 13-ը՝ 3-րդ և 4-րդ եռամսյակներում:

2) Ծրագրով նախատեսված և 1-ին եռամսյակում չստուգված 2 միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունները ներառել ստուգումների 2024 թվականի տարեկան ծրագրի 2-րդ եռամսյակում:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Recoverable Signature

X

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169